ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻՆ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Democracy
Development
Foundation

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՎԱՆԱՁՈՐ

2023

Հեղինակներ՝ Նազելի Մովսեսյան
Անուշ Պետրոսյան
Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Սույն տեղեկանքի թողարկումը հնարավոր է դարձել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի և Ժողովրդավարության ազգային հիմնադրամի օժանդակության շնորհիվ:

Տեղեկանքում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի և Ժողովրդավարության ազգային հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

ՆԱԽԱԲԱՆ

2023 թվականի ապրիլի 13-ին ՀՀ Կառավարության որոշմամբ ապրիլի 17-ից մինչև հուլիսի 31-ը հայտարարվեց շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ամառային զորակոչը[1]:

2023 թվականի ամառային զորակոչի շրջանակներում զինված ուժերի համալրումը շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության կամ այլընտրանքային զինվորական ծառայության ենթակա քաղաքացիներով իրականացվեց 2023 թվականի հունիսի 26-ից մինչև հուլիսի 31-ը ներառյալ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը, (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) շարունակելով իր գործունեությունը զորակոչիկների իրավունքների պաշտպանության ուղղությամբ, դիտարկելով 2023 թ. ամառային զորակոչի իրականացման ընթացքը, արձանագրել է խնդիրներ, որոնք ներկայացրել են Կազմակերպություն դիմած **զորակոչիկները**, ինչպես նաև **զինվորական հաշվառման ենթակա անձինք**՝ 2023 թ. փետրվարի 1-ից մինչև հուլիսի 31-ը ժամանակահատվածում:

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ 2021 թվականից սկսած Հայաստանի Հանրապետությունում պարբերաբար իրականացվում են վարժական հավաքներ, որոնց ընթացքում ևս արձանագրվում են խնդիրներ, սույն տեղեկանքում ներկայացվում են նաև դիտարկվող նույն ժամանակահատվածում Կազմակերպությանը դիմած **պահեստազորում հաշվառված անձանց** կողմից արձանագրված խնդիրները:

2023 թվականի ամառային զորակոչի ընթացքում Կազմակերպություն է դիմել 66 զորակոչիկ, 6 զինվորական հաշվառման ենթակա անձ և 49 պահեստազորում հաշվառված անձ:

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docID=176450

2023 Թ. ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉՆ ԸՆԴԳՐԿՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ ԴԻՄԱԾ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ, ՊԱՀԵՍՏԱԶՈՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԿՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐԸ

Զինվորական հաշվառման ենթակա 6 անձանցից.

- **4 հոգի** դիմել է **առողջական խնդրով** պայմանավորված զինվորական ծառայության ենթակա լինելու մասին խորհրդատվություն ստանալու նպատակով,
- **2 հոգի** դիմել է պարտադիր զինվորական ծառայությունից **տարկետման իրավունքի** վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով (1-ը՝ ուսման հիմքով, 1-ը՝ ընտանեկան պայմաններից ելնելով)։

Պահեստազորում հաշվառված 49 անձինք դիմել են հետևյալ խնդիրներով՝

- **20 հոգի՝ առողջական խնդիրների** առկայության պայմաններում վարժական հավաքների կանչվելու իրավաչափության մասին խորհրդատվություն ստանալու նպատակով,
- **7 հոգի՝ վարժական հավաքներին կանչվելու իրավաչափության վերաբերյալ** խորհրդատվություն ստանալու նպատակով,
- **5 հոգի՝ աշխատանքով պայմանավորված վարժական հավաքներին մասնակցության** ժամանակահատվածը փոխելու հնարավորության վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով,
- **5 հոգի՝ ընտանեկան պայմաններից ելնելով վարժական հավաքներին** կանչվելու իրավաչափության վերաբերյալ,
- **4 հոգի՝ վարժական հավաքներից խուսափելու իրավական հետևանքների** վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով,

- **2 հոգի՝ ուսման հիմքով վարժական հավաքների մասնակցության ժամանակահատվածը փոխելու** վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով,
- **2 հոգի՝ վարժական հավաքներին մասնակցության ծանուցման կարգի և դրանց չներկայանալու դեպքում իրավական հետևանքների** վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով,
- **1 հոգի՝ վարժական հավաքներին մասնակցության պայմաններում աշխատավարձի փոխհատուցման վերաբերյալ** խորհրդատվություն ստանալու նպատակով,
- **1 հոգի՝ վարժական հավաքներին որպես բժիշկ մասնակցելու հնարավորության** վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով,
- **1 հոգի՝ անձի քաղաքացիությամբ պայմանավորված վարժական հավաքներին մասնակցելու պարտավորության** վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով,
- **1 հոգի՝ վարժական հավաքների ենթակա պահեստազորում հաշվառված անձանցից ներկայացվող փաստաթղթերի պահանջի իրավաչափության** վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով:

66 զորակոչիկներից՝

- **55 հոգի դիմել է առողջական խնդիրների առկայությամբ զինվորական ծառայությանը իր պիտանիության վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով: Վերջիններս ահազանգել են նաև զորակոչի շրջանակներում իրականացված առողջական վիճակի հետազոտությունների արդյունքների չտրամադրման մասին,**
- **2 հոգի ահազանգել են զորակոչի շրջանակներում իրականացված առողջական վիճակի հետազոտությունների արդյունքների չտրամադրման մասին,**
- **2 հոգի դիմել է ԼԳԲՏ համայնքի անձանց զինապարտության վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով,**

- **1 հոգի դիմել է արտերկրում ոչ ֆորմալ կրթություն ստանալու նպատակով անձնագրում ելքի թույլտվության ժամկետի երկարաձգման հնարավորության վերաբերյալ հարցով,**
- **1 հոգի դիմել է եղբայրների միաժամանակ ծառայության անցնելու հնարավորության վերաբերյալ խարհրդատվություն ստանալու նպատակով,**
- **1 հոգի դիմել է այլընտրանքային ծառայության անցնելու կարգի վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով,**
- **1 հոգի դիմել է կցագրման ընթացակարգի վերաբերյալ խարհրդատվություն ստանալու նպատակով,**
- **1 հոգի դիմել է ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման մեջ կատարված մի շարք փոփոխությունների վերաբերյալ տեղեկություն ստանալու հարցով,**
- **1 հոգի դիմել է պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների ծառայության վայրերի նշանակման** մասին հրամանի դրույթների վերաբերյալ խորհրդատվություն ստանակու նպատակով,
- **1 հոգի դիմել է «Պաշտպան հայրենյաց» ծրագրով զինվորական** ծառայության անցնելու պայմանների վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով,
- **1 հոգի դիմել է որպես մարտական գործողությունների ժամանակ զոհված անձի եղբայր՝** իր զինապարտության վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով,
- **1 հոգի** դիմել է խորհրդատվություն ստանալու այն մասին, թե արդյոք **միակողմանի ծնողազուրկ զորակոչիկները** կարող են օրենքով սահմանված կարգով օգտվել որևէ արտոնությունից՝ զինվորական ծառայության վայրերի նշանակման տեսանկյունից,
- **1 հոգի դիմել է սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների զինապարտության** վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով:

2023 թ. ամառային զորակոչի ընթացքում երբեմն մեկ զորակոչիկ դիմել է մի քանի խնդրով, այդ պատճառով արձանագրված խնդիրների թիվը գերազանցում է Կազմակերպությանը դիմած զորակոչիկների թվին:

2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԻՄԱԾ ԱՆՁԱՆՑ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կազմակերպությանը դիմած **66 զորակոչիկներից.**

- **2 հոգի ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար,**
- **2 հոգի ճանաչվել է ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար,**
- **5 հոգու տրամադրվել է տարկետում զինվորական ծառայությունից մինչև 1 տարի ժամկետով (5 ամիս, 6 ամիս կամ 10 ամիս),**
- **2 հոգու վերաբերյալ կայացված կենտրոնական բժշկական հանձնաժողովի (ԿԲՀ) եզրակացության բողոքարկման արդյունքում որոշում է կայացվել վերջիններիս ներկայացնել հաջորդ՝ 2023 թ. ձմեռային զորակոչին:**
- **1 հոգու անձնագրում երկարաձգվել է արտերկրում գտնվելու թույլտվության ժամկետը՝ ոչ ֆորմալ կրթությունն ավարտելու նպատակով,**
- **11 հոգի՝ չհամաձայնելով առողջական վիճակի հետազոտությունների արդյունքների հետ, բողոքարկել** է զինվորական ծառայությանը պիտանիության մասին ԿԲՀ եզրակացությունը:

Ըստ աշխարհագրական տարածքների Կազմակերպություն դիմած զորակոչիկների, զինվորական հաշվառման ենթակա և վարժական հավաքներին կանչված պահեստազորում հաշվառված անձանց թիվը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. 2023 թ. ամառային զորակոչին դիմած անձանց թիվն ըստ աշխարհագրական տարածքների

Դիմած անձանց բանկության վայրերն ըստ մարզերի	Զորակոչիկ	Զինվորական հաշվառման ենթակա անձ	Պահեստազորում հաշվառված անձ	Ընդամենը
Լոռի	35	5	3	43
Երևան	7	1	13	21
Շիրակ	7			7
Կոտայք	3		3	6
Արմավիր	1		2	3
Տավուշ	1		1	2
Գեղարքունիք	1			1
Արարատի մարզ	1			1
Սյունիք			1	1
Արագածոտն			1	1
Արտերկիր	2			2
չի հայտնել	8		25	33
Ընդամենը	66	6	49	121

2023 թ. ամառային զորակոչին առավել մեծ թվով **զորակոչիկներ, զինվորական հաշվառման ենթակա և պահեստազորում հաշվառված անձինք** դիմել են **Լոռու** մարզից (**35,**

5 և 3 համապատասխանաբար), **Շիրակի** մարզից (**7 զորակոչիկ**) և **Երևան** քաղաքից (**7, 1 և 13** համապատասխանաբար)։

Համեմատության համար նշենք, որ 2022 թվականի ամառային զորակոչի ընթացքում Կազմակերպությանը դիմել էր **31** զորակոչիկ, զինվորական հաշվառման ենթակա **3** և պահեստազորում հաշվառված **8** անձ։

2023 թվականի ամառային զորակոչի ընթացքում Կազմակերպությանը դիմած զորակոչիկների թիվն ավելացել է ավելի քան կրկնակի անգամ, զինվորական հաշվառման ենթակա անձանց թիվը կրկնապատկվել է, իսկ պահեստազորում հաշվառված քաղաքացիների թիվն ավելացել է ավելի քան 6 անգամ։

Համեմատության համար նշենք նաև, որ 2021 թ. ձմեռային, 2022 թ. ամառային և 2022 թ. ձմեռային զորակոչերի ընթացքում Կազմակերպությանը դիմած զորակոչիկների թիվը միասին կազմել է 70 անձ (համապատասխանաբար 14, 31 և 25 զորակոչիկ), իսկ միայն 2023 թ. ամառային զորակոչին, ինչպես արդեն նշվեց, դիմել է 66 զորակոչիկ։

Զորակոչիկների դիմելիության բարձր ցուցանիշը 2023 թ. ամառային զորակոչին պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցից գլխավորը ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-ն որոշման մեջ կատարված փոփոխություններ են։

ԶՈՐԱԿՈՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

2022 թ. դեկտեմբերի 22-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-ն որոշման մեջ

փոփոխություններ կատարելու մասին» N 2053-Ն[2] որոշումը, որն ուժի մեջ մտավ 2023 թվականի փետրվարի 1-ին:

Ինչպես ներկայացրել ենք **«2021 թ. ձմեռային, 2022 թ. ամառային և 2022 թ. ձմեռային զորակոչերի ընթացքում զորակոչիկների իրավունքների վիճակի մասին» զեկույցում**[3], ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-ն որոշման մեջ կատարված փոփոխություններով ներդրվեցին չափելիության նոր ու ժամանակակից սանդղակներ:

Կազմակերպության՝ տարիների ջանքերի, ջատագովության արդյունքում 2023 թ. ուժի մեջ մտած փոփոխություններով՝ Կառավարության 2018 թ. N 404-Ն որոշմամբ սահմանված ախտորոշումները համապատասխանեցվեցին Հիվանդությունների միջազգային դասակարգման 10-րդ վերանայմանը[4] (2019):

Նշենք, որ դեռևս 2019 թվականից սկսած ՀՔԱ Վանաձորի գրասենյակը առաջարկում էր[5] ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշմամբ սահմանվող հիվանդությունները համապատասխանեցնել Հիվանդությունների միջազգային 10-րդ դասակարգմանը: Այդ նպատակով Կազմակերպությունը բազմիցս հանդիպումներ է ունեցել շահագրգիռ պետական մարմինների ներկայացուցիչների հետ՝ ընդգծելով խնդրի կարևորությունը:

Չնայած ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի N 404-Ն որոշման մեջ իրականացրած փոփոխությունները դրական են, այնուամենայնիվ փորձաքննության իրականացման կարգի, առանձին հիվանդությունների ախտորոշման չափորոշիչների հետ կապված մնացել են խնդիրներ, որոնց վերաբերյալ Կազմակերպությունը մշակել է առաջարկություններ և դրանք ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարությանը: Ցավոք, դրանց մեծ մասը չի ընդունվել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տարբեր պատճառաբանությամբ:

[2] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172242
[3] https://hcav.am/hcav-am-report-03-04-2023/
[4] https://icd.who.int/browse10/2019/en#/F20-F29
[5] https://drive.google.com/file/d/1Alf5ou27JMQbMWLlwk5_0G11-9fluz3M/view?pli=1

Ամփոփելով ՀՀ կառավարության 2018 թ. N **404-Ն որոշման մեջ 2022 թվականի դեկտեմբերի 22-ին կատարված և 2023 թ փետրվարի 1-ին ուժի մեջ մտած փոփոխությունները, կարող ենք արձանագրել, որ դրանք դրական են այն իմաստով, որ.**

- **բոլոր հիվանդությունների դասակարգումները համապատասխանեցված են ներկայումս գործող Հիվանդությունների միջազգային դասակարգման տասներորդ վերանայման դասակարգումներին,**
- **ըստ կարգավիճակի՝ անձանց փորձաքննության սյունակներն այժմ առավել հստակ են դասակարգված (ըստ առանձին խմբերի),**
- **որոշ դեպքերում, ի տարբերություն նախկինում գործող կարգավորման, պիտանիության աստիճանը որոշող դրույթներում հաշվի է առնվում զորակոչիկի կամ զինծառայողի առողջական վիճակը:**

Օրինակ՝ 9-րդ հոդվածի «Հոգեկան և վարքային խանգարում-ներ հոգեակտիվ նյութերի գործածման հետևանքով» «բ» կետը՝ «սուր պսիխոտիկ խանգարումներ՝ անձի չափավոր կամ թեթև արտահայտված փոփոխություններով, կախվածության համախտանիշ, դադարեցման վիճակներ և այլ բարդություններ, վնասակար հետևանքներ (սոմատիկ և հոգեկան)՝ հոգեակտիվ նյութերի գործածման հետևանքով» նախկինում զորակոչիկների համար նախատեսում էր տարկետում մինչև մեկ ատրի ժամկետով («կարիք ունի բուժման»), իսկ այժմ սահմանում է, որ զորակոչիկը «ժամանակավորապես ոչ պիտանի է զինծառայության համար»:

19-րդ հոդվածի՝ «Քրոնիկ վարակային հիվանդություններ» «ա» կետը նախկինում սահմանում էր, որ «զորակոչիկը ժամանակավորապես ոչ պիտանի է զինծառայության համար», իսկ այժմ «զորակոչիկը ոչ պիտանի է զինծառայության համար»:

57-րդ հոդվածի՝ «Ամորձու թաղանթների և սերմնալարի ջրգողություն» «ա» կետը՝ «խիստ արտահայտված, քայլքը դժվարացնող» նախկինում զորակոչիկների համար սահմանում էր տարկետում մինչև 1 տարի ժամկետով («կարիք ունի բուժման»), իսկ

զինծառայողների դեպքում՝ ծառայողական պարտականություններից մասնակի ազատման՝ մինչև 15 օր ժամկետով կամ արձակուրդ հիվանդության պատճառով (վերականգնողական), իսկ այժմ զորակոչիկների համար սահմանում է զինծառայությանը ժամանակավորապես ոչ պիտանիություն, իսկ զինծառայողների համար՝ ոչ պիտանիություն:

Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման մեջ, չնայած կատարված փոփոխություններին, առկա թերությունները և անհստակությունները մնացել են անփոփոխ.

- **սահմանված չեն հստակ ժամկետներ՝ ժամանակ ենթադրող («ձգձգվող») և հիվանդության բուժման բարդություն ենթադրող («բուժմանը դժվար ենթարկվող») որոշ ձևակերպումների համար: Մինչ ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման մեջ նոր փոփոխությունների ուժի մեջ մտնելը, ՀՔԱ Վանաձորի գրասենյակն առաջարկել էր հստակեցնել «ձգձգվող» կամ «բուժմանը դժվար ենթարկվող» հասկացությունները և սահմանել կոնկրետ ժամկետներ կամ ժամանակահատվածներ ըստ յուրաքանչյուր հիվանդության՝ ելնելով հիվանդության ախտորոշման համար անհրաժեշտ ժամանակից: Առաջարկությունը չի ընդունվել ՀՀ ՊՆ կողմից այն պատճառաբանությամբ, որ բուժման գործընթացում յուրաքանչյուր հիվանդության բուժման և ելքի համար գործնականում հնարավոր չէ որևէ ժամկետ սահմանել:**

- **հստակեցված չեն որոշ հոդվածների սահմանումներն ու որոշ առողջական խնդիրների դեպքում փորձաքննության կարգը:**

Օրինակ՝ ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման 78-րդ հոդվածով սահմանվում է, որ աչքի ծակող-թափանցող վնասվածքների կապակցությամբ վիրահատության ենթարկված զորակոչիկները լիարժեք բուժումից և վերականգնումից

հետո ճանաչվում են սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար, անկախ տեսողության սրությունից և կիրառվում է 85-րդ հոդվածի «գ» կետը: Տվյալ հոդվածն անհասկանալի է այն առումով, որ այն դեպքերում, երբ վնասվածքից հետո անձը ստացել է լիարժեք բուժում, սակայն, տեսողության սրությունը տուժել է, ապա անհասկանալի է, թե ըստ որ հոդվածի է փորձաքննվում, այն դեպքում, երբ 78-րդ հոդվածը բացառում է տեսողության սրությամբ փորձաքննումը, և փորձաքննությունը սահմանվում է ըստ 85-րդ հոդվածի: Մինչ որոշման նոր փոփոխությունների ուժի մեջ մտնելը, ՀՔԱ Վանաձորի գրասենյակն առաջարկել էր հստակեցնել հոդվածը: Առաջարկությունը չի ընդունվել ՀՀ ՊՆ կողմից այն պատճառաբանությամբ, որ անհրաժեշտ է 78-րդ և 85-րդ հոդվածների «գ» կետերի սահմանափակումների կիրառումը՝ հավելելով, որ նույնիսկ հնարավոր բարձր տեսողության սրությունը մթնշաղային և գիշերային ժամերին զգալի տուժում է, որը, ըստ ՀՀ ՊՆ-ի, հիմնավոր է դարձնում 85-րդ հոդվածի «գ» կետի կիրառումը:

«Գործառութային բնույթի, առանց կլինիկական դրսևորումների, անցողիկ, եզակի նախասիրտ-փորոքային հաղորդչականության I-II աստիճանի մասնակի պաշարումները և սինո-աթրիալ II աստիճանի մասնակի պաշարումները փորձաքննվում են ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման 26-րդ հոդվածի «դ» կետով: Սակայն մինչ որոշման նոր փոփոխությունների ուժի մեջ մտնելը, ՀՔԱ Վանաձորի գրասենյակն առաջարկել էր վերանայել այս հոդվածը, քանի որ II աստիճանի պաշարումը չի կարող լինել մասնակի և անցողիկ: Անցողիկ, եզակի առաջին աստիճանի պաշարումը կարող է լինել ֆիզիոլոգիական՝ դեռահաս, երիտասարդ տարիքում: Առաջարկությունը չի ընդունվել ՀՀ ՊՆ կողմից այն պատճառաբանությամբ, որ «II աստիճանի պաշարումը իհարկե չի կարող լինել մասնակի, բայց կարող է լինել անցողիկ: Առաջին աստիճանի պաշարումը կարող է լինել ֆիզիոլոգիական՝ դեռահաս, երիտասարդ տարիքում», որն ընդգրկված է որոշման մեջ և ձևակերպված է որպես «Գործառութային բնույթի, առանց կլինիկական դրսևորումների անցողիկ, եզակի առաջին աստիճանի պաշարումներ», որը, ըստ ՀՀ ՊՆ-ի, ավելի

մանրամասն է ներկայացնում և թույլ է տալիս տարբերակել վերը նշված պաշարումների ֆիզիոլոգիական կամ պաթոլոգիկ լինելը:

- **քանի որ ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի N 404-Ն որոշմամբ սահմանված չէ սեզոնային հիվանդությունները (ալերգիա, անոթային հիվանդություններ և այլն) համապատասխան եղանակային պայմաններում փորձաքննելու դրույթը, գործնականում ևս հաշվի չեն առնվում դրանց բնույթն ու առանձնահատկությունները. չի սահմանվում հետազոտությունների ու փորձաքննությունների կազմակերպումը միայն համապատասխան եղանակային պայմաններում: Որպես կանոն, այն զորակոչիկները, ովքեր փորձաքննվում են իրենց սեզոնային հիվանդությունների դրսևորման ոչ ակնառու եղանակային պայմաններում և ճանաչվում են պիտանի զինվորական ծառայության համար, համապատասխան եղանակային պայմաններում փորձաքննվելու դեպքում տարկետում են ստանում:**

Զորակոչիկներին իրենց առողջական խնդիրների դրսևորման համապատասխան եղանակային պայմաններում չփորձաքննելու արդյունքում անհնար է ստանալ օբյեկտիվ ախտորոշում, որի հետևանքով զորակոչիկները չեն համաձայվում իրենց առողջական վիճակի հետազոտությունների արդյունքների հետ:

ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունների ուսումնասիրության ընթացքում արձանագրվել է նաև հետևյալ.

- **որոշ հիվանդությունների դեպքում զինվորական ծառայության պիտանիության աստիճանը որոշող դրույթներում կատարված փոփոխություններով հաշվի չի առնվում առողջական խնդիրների ծանրության աստիճանը:**

Օրինակ՝ ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման 42-րդ հոդվածի՝ «Ոտքերի մատների արատներ (M20)» «ա» կետում՝ «երկու ոտքի մատների բացակայություն կամ սերտաճում» կատարվել է լրացում «առաջին մատի բացակայություն»: Նույն հոդվածում

փոխվել է «բ» կետը՝ նախկինում «քայլքը և կոշիկ կրելը չափավոր դժվարացնող՝ ոտքի մատների բացակայություն, անշարժություն, ծռվածություն կամ սերտաճում», այժմ ձևակերպվել է՝ «քայլքի և կոշիկ կրելու զգալի արտահայտված խանգարումով»։ Նույն հոդվածի «գ» կետը՝ «քայլքի և կոշիկ կրելու չափավոր արտահայտված խանգարումով» նախկինում սահմանում էր զորակոչիկների ոչ պիտանիություն զինվորական ծառայության համար, իսկ այժմ նույն ախտորոշմամբ զորակոչիկները և զինծառայողները սահմանափակումով պիտանի են ճանաչվում զինվորական ծառայության համար)։

- **որոշ հիվանդությունների դեպքում ֆունկցիայի խանգարման գնահատման հստակ չափորոշիչները և հիվանդության հետազոտության հստակ մեխանիզմները հանվել են։**

Օրինակ՝ ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման 48-րդ հոդվածը մինչև 2023 թ. փետրվարի 1-ին փոփոխությունների ուժի մեջ մտնելը, ներառում էր «անգիոտրոֆոնևրոզ» եզրույթը (վերջույթների անոթների արյան շրջանառության խանգարում), որն ուներ ֆունկցիայի խանգարման գնահատման հստակ չափորոշիչներ և հիվանդության հետազոտության հստակ մեխանիզմ, այն է՝ կատարվում էր մատնային զարկերակների դոպլեր հետազոտություն՝ **ցրտային փորձով՝ նշելով վերականգնման ժամանակը (աննշան խանգարման ժամանակ՝ վերականգնման ժամանակը 4-ից մինչև 6 րոպե, չափավոր խանգարման ժամանակ՝ 6-ից մինչև 8 րոպե, զգալի՝ 8 և ավելի րոպե)**: Ներկայումս փորձաքննության իրականացման նման մեխանիզմ չկա։ Ավելին, ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի 404-Ն որոշման 48-րդ հոդվածը «անգիոտրոֆոնևրոզ» ախտորոշում չի ներառում, փոխարենը, որոշման փոփոխության համաձայն, անոթների արյան շրջանառության խանգարման հետազոտությունը կատարվում է դուպլեքս սկանավորման, կոնտրաստային մուլտիսպիրալ ՀՇ-անգիոգրաֆիայի, ուղղակի անգիոգրաֆիայի, ՄՌՇ անգիոգրաֆիայի միջոցով։

Ի դեպ 2023 թ. ամառային զորակոչի ընթացքում առողջական խնդրով Կազմակերպություն դիմած զորակոչիկներից 18 %-ի (10 զորակոչիկի) խնդիրը կապված էր հենց անոթների հետ (անգիոտրոֆոնևրոզ), և վերջիններս Կազմակերպությանը հայտնել են, որ թվարկված հետազոտության մեթոդներից գործնականում իրականացվում է դուպլեքս սկանավորումը:

Նշենք, որ ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի N 404-Ն որոշման նախկինում գործող կարգավորման շրջանակներում փորձաքննված և տարկետում ստացած զորակոչիկներն այժմ նույն ախտորոշմամբ ճանաչվում են պիտանի զինվորական ծառայության համար, չնայած այն հանգամանքին, որ վերջիններիս առողջական վիճակում որևէ փոփոխություն չի արձանագրվել: Կազմակերպության կողմից բազմիցս ներկայացված առաջարկությունը՝ սեզոնային հիվանդությունների դեպքում զորակոչիկներին պարտադիր կարգով փորձաքննել համապատասխան եղանակային պայմաններում, դեռևս չի ընդունվել: Հատկանշական է նաև այն, որ չնայած 404-Ն որոշման 48-րդ հոդվածը «անգիոտրոֆոնևրոզ» ախտորոշում չի ներառում, սակայն 2023 թ. ամառային զորակոչին ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության բժշկական հանձնաժողովները շարունակում են զորակոչիկների բժշկական հետազոտությունների արդյունքում նշել հենց «անգիոտրոֆոնևրոզ» կամ «անգիոնևրոզ» ախտորոշումը: **Ակնհայտ է, որ ՀՀ առողջապահության նախարարության որոշ բժշկական հաստատությունների աշխատակիցներին պատշաճ չեն տեղեկացրել Կառավարության որոշման մեջ կատարված փոփոխությունների մասին:**

- **ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման բացատրական մասում որոշ հոդվածների փորձաքննության կարգը հակասում է նույն որոշման հավելված 1-ում իմպերատիվ կերպով գործող դրույթին:**

Օրինակ՝ ներկայումս ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման Հավելված N 1-ի ցանկի գործող կարգավորմամբ՝ միակ ամորձու առկայության

դեպքում անձանց փորձաքննելու մասին նշվում է միայն 58-րդ հոդվածի «ա» կետում, մասնավորապես՝ «ա) երկու ամորձու տեղակայում որովայնի խոռոչում կամ բացակայությունը, միակ ամորձի» և նախատեսվում է, որ I, II, IV, V, VI սյունակներով փորձաքննվող անձինք ճանաչվում են ոչ պիտանի զինվորական ծառայության համար: Մինչդեռ 58-րդ հոդվածով փորձաքննվողների վերաբերյալ նշվում է 56-րդ հոդվածի բացատրական մասում, որտեղ սահմանվում է, որ «չորրորդ և հինգերորդ սյունակների համար կիրառվում է 58 հոդվածի «գ» կետը», այսինքն՝ անձինք պիտանի են զինվորական ծառայության համար: Ընդգծենք, որ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման Հավելված 1-ը իմպերատիվ կերպով սահմանում է, որ միակ ամորձու դեպքում անձինք, այդ թվում նաև չորրորդ և հինգերորդ սյունակներով փորձաքննվողները պետք է փորձաքննվեն միայն 58-րդ հոդվածի «ա» կետով և ոչ թե «գ» կետով: Կազմակերպությունն առաջարկել է՝ 56-րդ հոդվածի «ա» կետի բացատրական մասի 8-րդ կետում «8) միակ ամորձի՝ (կիրառվում է 58 հոդվածի «ա» կետը» բառերից հետո հանել «չորրորդ և հինգերորդ սյունակների համար կիրառվում է 58 հոդվածի «գ» կետը» բառերը):

2022 թ. դեկտեմբրի 22-ին ՀՀ կառավարությունն ընդունեց որոշում ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի **N 405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:**

Որոշմամբ կատարված փոփոխությունները դրական են այն իմաստով, որ.

- **սահմանում են պահեստազորում հաշվառված քաղաքացիների բժշկական հետազոտությունների ցանկը,**
- **անձի կողմից իր առողջական վիճակի վերաբերյալ տվյալները քաղաքացուն կարող են հասանելի լինել նաև էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի միջոցով:**

Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության 2018 թ. N 405-Ն որոշման մեջ, չնայած կատարված փոփոխություններին, առկա թերությունները և անհստակությունները մնացել են անփոփոխ.

- անձի մոտ 5 և ավելի հիվանդության առկայության դեպքում շեշտը դրվում է միայն հիվանդությունների քանակի վրա, նույն անձի մոտ զուգահեռաբար մի քանի հիվանդության պարագայում հնարավոր ծանրաբեռնվածության և ընդհանուր առողջական վիճակի և հնարավոր վատթարացման հանգամանքը չի դիտարկվում,
- միաժամանակ մի քանի հիվանդության դեպքում չի սահմանվում անձի զինվորական ծառայությանը պիտանիությունը որոշելու իրավական հիմքերը. անձի մոտ առկա հիվանդությունները դիտարկում են մեկը մյուսից առանձին, չդիտարկելով անձի առողջական վիճակի ողջ պատկերը:

ՀՀ կառավարության 2018 թ. N 405-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունների ուսումնասիրության ընթացքում արձանագրվել է նաև հետևյալ.

- Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կազմում ընդգրկվում են նաև ՀՀ պաշտպանության նախարարության և Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության ներկայացուցիչներ, որոնք նախկինում գործող որոշման հավելվածի համաձայն չէին ընդգրկվում ԿԲՀ-ի կազմում:

Նման փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը որևէ ձևով չի հիմնավորվել: Կատարված փոփոխությունը, ըստ կազմակերպության, չի կարող ապահովել ԿԲՀ-ի գործառնական օբյեկտիվությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինիս հիմնական գործառույթը զինապարտ քաղաքացիների առողջական վիճակի հետազոտության և բժշկական փորձաքննության կազմակերպումն է, մինչդեռ Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության գործառույթը հիմնականում

զինված ուժերի համալրում է զինապարտ քաղաքացիներով: Հաշվի առնելով ԿԲՀ-ի դերն ու իրականացրած գործառույթների բնույթը՝ Կազմակերպություն գտնում է, որ նպատահարմար չէ վերջինիս կազմում ընդգրկել պաշտպանության ոլորտի քաղաքականություն իրականացնող մարմինների ներկայացուցիչների՝ գործընթացի կազմակերպմանը ներգրավելով միայն այդ համակարգից դուրս այլ մարմիններին ու դրանց ներկայացուցիչներին՝ խուսափելու համար շահերի բախումից: Կազմակերպությունն այս մասին առաջարկություն է ներկայացրել ՀՀ ՊՆ-ին, սակայն առաջարկությունը ՀՀ ՊՆ կողմից չի ընդունվել այն պատճառաբանությամբ, որ ԿԲՀ կազմում ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության ներկայացուցիչների ընդգրկումը պայմանավորված է հանձնաժողովի նիստերը պլանավորելու և ՀՀ ՊՆ ԶԶՀԾ համապատասխան տարածքային ստորաբաժանումներում կազմակերպելու, փորձաքննության ներկայացվող քաղաքացիների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում տարածքային ստորաբաժանումներից լրացուցիչ տվյալներ և փաստաթղթեր ստանալու, ինչպես նաև պաշտպանության նախարարին կամ հանձնաժողովի նախագահին հասցեագրված դիմում բողոքները քննելու և համապատասխան ընթացք տալու աշխատանքները համակարգելու հանգամանքով:

Ի դեպ, որոշ իրավական ակտերում շարունակվում է կիրառվել «Զինվորական կոմիսարիատ» և ոչ թե «Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում» անվանումը:

Փաստացի, 2023 թ. ամառային զորակոչն առաջինն էր, որն անցկացվեց ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի N 404-Ն և N 405-Ն որոշումներում կատարված վերը շարադրված փոփոխություններից հետո:

2023 թ. ամառային զորակոչի ընթացքում Կազմակերպություն դիմած զորակոչիկների, զինվորական հաշվառման ենթակա և պահեստազորում հաշվառված անձանց մեծ թիվը պայմանավորված է նաև այն համգամանքով, որ զորակոչիկները,

զինվորական հաշվառման ենթակա և պահեստազորում հաշվառված անձինք տեղեկացված չեն որոշումներով զորակոչի իրականացումը կարգավորող տարբեր իրավական ակտերի հոդվածների փոփոխությունների մասին:

Բացի այդ, 2023 թ. ամառային զորակոչի ընթացքում Կազմակերպությանը դիմած զորակոչիկների մի մասը, ովքեր նախորդ զորակոչին ստացել էին տարկետում, նշված զորակոչի շրջանակներում նույն առողջական խնդիրներով Կենտրոնական բժշկական հանձնաժողովի որոշումներով ճանաչվել էին պիտանի/ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար, որի հետ անհամաձայնություն հայտնելով դիմել էին Կազմակերպությանը:

Ինչպես արձանագրել էինք «2021 թ. ձմեռային, 2022 թ. ամառային և 2022 թ. ձմեռային զորակոչերի ընթացքում զորակոչիկների իրավունքների վիճակի մասին» Կազմակերպության զեկույցում[6] քաղաքացիների շրջանում կա անվստահություն զորակոչի բժշկական հանձնաժողովների աշխատանքի օբյեկտիվության նկատմամբ:

2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ամփոփելով 2023 թ. ամառային զորակոչի ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի արձանագրած խնդիրները՝ ՀՀ կառավարության 2018 թվականի N 404-Ն և 405-Ն որոշումներում 2022 թ դեկտեմբերի 22-ին կատարված և 2023 թ. փոտրվարի 1-ին ուժի մեջ մտած փոփոխությունների համատեքստում, արձանագրում ենք հետևյալ խնդիրները.

[6] https://hcav.am/hcav-am-report-03-04-2023/

Օրենսդրական խնդիրներ

1. Որոշ հիվանդությունների դեպքում զինվորական ծառայության պիտանիության մասին որոշում կայացնելիս հաշվի չի առնվում առողջական խնդիրների ծանրության աստիճանը։

2. ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման բացատրական մասում որոշ հոդվածների փորձաքննության կարգը հակասում է նույն որոշման Հավելված 1-ում իմպերատիվ կերպով գործող դրույթին։

3. Անձի մոտ 5 և ավելի հիվանդության առկայության դեպքում շեշտը դրվում է միայն հիվանդությունների քանակի վրա, հետևաբար նույն անձի մոտ միաժամանակ մի քանի հիվանդության պարագայում նրա ընդհանուր առողջական վիճակը և հնարավոր վատթարացման հանգամանքը չի դիտարկվում։

4. Միաժամանակ մի քանի հիվանդության դեպքում օրենսդրական մակարդակով սահմանված չեն անձի զինվորական ծառայությանը պիտանիությունը որոշելու իրավական հիմքերը՝ անձի մոտ առկա հիվանդությունները դիտարկելով առանձին՝ մեկը մյուսից մեկուսի և ոչ թե դիտարկելով անձի առողջական վիճակի ողջ պատկերը,

5. ԿԲՀ կազմում ՀՀ պաշտպանության նախարարության և Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության ներկայացուցիչներին ընդգրկելը նվազեցնում է վստահությունը ԿԲՀ-ի գործառնական օբյեկտիվության հանդեպ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինիս գործառույթը բժշկական հանձնաժողովների կողմից բժշկական փորձաքննություն անցած շարքային և պահեստազորի սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայության զորակոչվողների զինվորական ծառայության պիտանիության վերաբերյալ եզրակացություն կայացնելն է, մինչդեռ Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության հիմնական գործառույթը զինված ուժերի համալրում է զինապարտ քաղաքացիներով։

Գործնականում առկա խնդիրներ

6. Չնայած ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման Հավելված 1-ում հիվանդությունների դասակարգումներն այժմ համապատասխանեցված են ներկայումս գործող Հիվանդությունների միջազգային դասակարգման տասներորդ վերանայման դասակարգումներին, սակայն գործնականում առկա են ախտորոշումների ձևակերպման խնդիրներ (օրինակ՝ «անգիոտրոֆոնևրոզ» հիվանդության ախտորոշում)։
7. Պետության պարտավորությունն է զորակոչի շրջանակներում համապատասխան գործառույթ իրականացնող կառույցների աշխատակիցներին պատշաճ կարգով տեղեկացնել ՀՀ կառավարության որոշումներում կատարված փոփոխությունների մասին, մինչդեռ ՀՀ առողջապահության նախարարության որոշ բժշկական հաստատությունների աշխատակիցներին պատշաճ չեն տեղեկացրել ՀՀ Կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի N 404-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունների մասին, ինչի արդյունքում անձանց տրված ախտորոշումները չեն համապատասխանում նշված որոշմանը։

8. Քանի որ օրենսդրության մակարդակում՝ ՀՀ կառավարությայն 2018 թ. ապրիլի 12-ի N 404-Ն որոշմամբ, սահմանված չէ սեզոնային հիվանդությունները (ալերգիա, անոթային հիվանդություններ և այլն) համապատասխան եղանակային պայմաններում փորձաքննելու դրույթը, գործնականում ևս հաշվի չեն առնվում նման հիվանդությունների բնույթն ու առանձնահատկությունները. հետազոտություններն ու փորձաքննությունը չեն կազմակերպվում համապատասխան եղանակային պայմաններում, ինչը կարող է որոշիչ նշանակություն ունենալ զինվորական ծառայությանը զորակոչիկի պիտանիության մասին որոշման համար։ *2023 թ. ամառային զորակոչին անոթային խնդիրներով դիմած զորակոչիկների (18 %) հետազոտություններն իրականացվել են այնպիսի եղանակային պայմաններում, երբ դրանք արտահայտված են նվազագույն չափով։*

9. Անտեսվում են զորակոչիկների առավել լուրջ առողջական խնդիրները և զինվորական ծառայությանը պիտանիության մասին որոշում կայացնելիս զորակոչային բժշկական հանձնաժողովները հիմնվում են առկա այլ առողջական խնդիրների վրա, որոնցով, հիմնականում, կայացվում է որոշում զինվորական ծառայությանը պիտանիության մասին։
10. Բժշկական հաստատությունները շարունակում են զորակոչիկներին չտրամադրել վերջիններիս առողջական վիճակի վերաբերյալ փաստաթղթերը, փոխարենը զորակոչիկներին հորդորում են նշված փաստաթղթերը ստանալ Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներից՝ դրանով իսկ խախտելով ՀՀ Կառավարության 2018 թվականի N 405-Ն որոշման 35-րդ հոդվածով սահմանված դրույթը: *(«Բժշկական կազմակերպությունը պարտավոր է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին կամ նրա կողմից լիազորված անձին տրամադրել տեղեկություններ առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին»: Ի դեպ, Կազմակերպություն դիմած գրեթե բոլոր զորակոչիկներն առնչվել են նշված խնդրի հետ։*
11. ՀՀ Կառավարության 2018 թվականի N 405-Ն որոշման 35-րդ հոդվածով սահմանված է նաև դրույթ այն մասին, որ *առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասի տվյալները քաղաքացուն կարող են հասանելի լինել նաև էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի միջոցով,* մինչդեռ 2023 թ. ամառային զորակոչին Կազմակերպություն դիմած զորակոչիկներից շատերը իրազեկված չեն ԱՐՄԵԴ համակարգից օգտվելու կարգի մասին։

12. Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների բժշկական հանձնաժողովը քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացությունները չի տրամադրում ակտի հասցեատիրոջը կամ տրամադրում է այն ժամանակ, երբ զորակոչիկը ժամանակ չի ունենում ծանոթանալու դրանց և մինչև զորակոչի ավարտը, անհրաժեշտության դեպքում կամ եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում, բողոքարկելու իր վերաբերյալ կայացված որոշումը:
13. Ի տարբերություն նախորդ տարիների զորակոչերի[7], երբ Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների բժշկական հանձնաժողովները հաճախ հաշվի չէին առնում զորակոչիկների սեփական նախաձեռնությամբ և ֆինանսական միջոցներով իրականացրած հետազոտությունների արդյունքները, 2023 թ. ամառային զորակոչի ընթացքում Կազմակերպությանը դիմած զորակոչիկներն ահազանգում էին այն մասին, որ զորակոչիկների գանգատները համարելով ոչ հիմնավոր և ոչ բավարար, զորակոչային բժշկական հանձնաժողովները նրանց խորհուրդ են տալիս հետազոտություններ անցնել սեփական ֆինանսական միջոցներով և միայն դրանց արդյունքերը ուսումնասիրելով՝ որոշում նշված առողջական խնդրով զորակոչիկներին հետազոտության ուղեգրելու անհրաժեշտությունը:

14. Միևնույն ժամանակ շարունակվել է արձանագրվել հակառակ խնդիրը՝ որոշ բժշկական հաստատություններ հրաժարվում են հետազոտել առանց ուղեգրի ներկայացած 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիներին՝ վերջիններիս տարիքի և զորակոչիկ հանդիսանալու հանգամանքով պայմանավորված:

15. Չնայած ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշման մեջ կատարված փոփոխություններով և լրացումներով սահմանվեց պահեստազորում հաշվառված քաղաքացիների բժշկական հետազոտությունների ցանկը, սակայն պահեստազորում հաշվառված անձինք հիմնականում չեն ենթարկվում համալիր

[7] https://hcav.am/hcav-am-report-03-04-2023/

բժշկական զննություններին վարժական հավանքներին ներգրավվելիս, ինչի արդյունքում ճանաչվում են՝ «ենթակա» վարժական հավաքներին մասնակցելու։

2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԻՄԱԾ ՈՐՈՇ ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԵՍՏԱԶՈՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Վ. Հ.

2023 թվականի ամառային զորակոչի ընթացքում Կազմակերպությանը դիմած զորակոչիկ Վ. Հ.-ն, ինչպես նաև Հ. Ն.-ն, Ա. Պ.-ն, Հ. Կ.-ն, Ա. Ա.-ն, Ս. Պ.-ն, Ա. Գ.-ն, Վ. Թ.-ն, Կ. Ա.-ն և ևս մեկ զորակոչիկ (անանուն) ունեն վերջույթների անոթների արյան շրջանառության խնդիրներ, որոնց կապակցությամբ զորակոչային բժշկական հանձնաժողովի կողմից ուղեգրվել են հետազոտությունների տարբեր բժշկական հաստատություններում։

Բոլոր վերը թվարկված զորակոչիկների մոտ ստորին և/կամ վերին վերջույթների արշան շրջանառության խանգարման խնդիրներն արտահայտվում են տարվա ցուրտ եղանակային պայմաններում, ուստի ամառային զորակոչի ընթացքում վերջիններիս նկատմամբ իրականացված հետազոտությունները չեն կարող արտացոլել զորակոչկների առողջական վիճակի իրական պատկերը։

Զորակոչիկ Վ. Հ.-ին նախկինում 2 անգամ տրամադրվել է տարկետում նշված խնդրի կապակցությամբ, սակայն 2023 թ. ամառային զորակոչին նա նախ սահմանափակումով պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար, ապա իր միջոցներով անցած հետազոտությունները կենտրոնական բժշկական հանձնաժողովին ներկայացնելուց հետո միայն ուղեգրվել է լրացուցիչ բժշկական հետազոտությունների, որոնց արդյունքում զորակոչիկին տրամադրվել է տարկետում մինչև մեկ տարի ժամկետով։

2. Ա. Բ.

Զորակոչիկ Ա. Բ.-ին մինչև 2023 թվականի ամառային զորակոչը 2 անգամ տրամադրվել է տարկետում ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի N 404-Ն որոշման 20-րդ հոդվածի «դ» կետով (Ներզատիչ համակարգի և նյութափոխանակության հիվանդություններ՝ **գործառույթների ժամանակավոր խանգարումներով**), մինչդեռ 2023 թվականի ամառային զորակոչին վերջինս ճանաչվել է սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար նույն հոդվածի «զ» կետով (**գործառույթների աննշան արտահայտված խանգարում**):

Զորակոչիկը իր միջոցներով անցել է հետազոտություն, որի արդյունքների հիման վրա Կազմակերպությունը գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարին՝ զորակոչիկին վերափորձաքննության ենթարկելու և զինվորական ծառայությանը վերջինիս պիտանիության մասին որոշումը վերանայելու հարցով:

Ստուգիչ փորձաքննության արդյունքում զորակոչիկին տրամադրվել է տարկետում մինչև մեկ տարի ժամկետով:

3. Կ. Ս.

Կազմակերպություն դիմած զորակոչիկ Կ. Ս.-ն, ով 2020 թվականին ամառային զորակոչին ճանաչվել էր ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար ՀՀ կատավարության 2018 թ. ապրիլի 12-ի N 404-Ն որոշման նախկինում գործող կարգավորման 13-րդ հոդվածի «բ» կետով (գանգուղեղի և ողնուղեղի վնասվածքների հետևանքներ՝ **ֆունկցիաների չափավոր արտահայտված խանգարումով**), 2023 թ. ամառային զորակոչին ճանաչվել էր պիտանի զինվորական ծառայության համար:

Իր ֆինանսական միջոցներով անցած ՄՌՇ (MRT) հետազոտություն արդյունքներով զորակոչիկը ներկայացել է ԿԲՀ նիստին և ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար 2023 թ. ամառային զորակոչի ժամանակ:

4. Ա. Ա.

Կազմակերպությանը դիմած զորակոչիկ Ա. Ա.-ն ոտքի բեկորային կոտրվածքի պատճառով ունի ոթտնաթաթի ծռվածություն, ինչի պատճառով ոտքն այտուցում և ցավում է: Չնայած խնդիրն ակնհայտ է և այն կարել էր նկատել զորակոչիկի մարմնազննության ժամանակ, սակայն 2023 թ. ամառային զորակոչի ժամանակ զորակոչիկի ներկայացրած գանգատները հաշվի չեն առնվել, և վերջինս չի ուղեգրվել բժշկական հետազոտությունների նշված խնդրի կապակցությամբ: Թերի հետազոտությունների արդյունքում զորակոչիկը 2023 թ. ամառային զորակոչի վերջին օրերին ներկայացվելով ԿԲՀ նիստին՝ ճանաչվել է սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար: ԿԲՀ եզրակացության հետ անհամաձայնություն հայտնելուց հետո զորակոչիկին հայտնել են, որ նշված առողջական խնդրիրը կհետազոտեն հաջորդ՝ 2023 թ. ձմեռային զորակոչի ժամանակ:

5. Ա. Գ.

Զորակոչիկ Ա. Գ.-ն 2023 թ. ամառային զորակոչի շրջանակներում չի ուղեգրվել բժշկական հետազոտությունների առողջական խնդիրների մի մասի՝ անոթային և նյարդային խնդիրների կապակցությամբ: Արդյունքում 2023 թ. ամառային զորակոչի վերջին օրերին զորակոչիկը, ներկայացվելով ԿԲՀ նիստին, ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար: ԿԲՀ եզրակացության հետ անհամաձայնություն հայտնելուց հետո զորակոչիկին հայտնել են, որ նշված առողջական խնդրիրը կհետազոտեն հաջորդ՝ 2023 թ. ձմեռային զորակոչի ժամանակ:

Փաստացի, զորակոչիկներին համալիր հետազոտությունների չենթարկելու և նրանց գանգատները հաշվի չառնելու հետևանքով վերջիններիս զորակոչը հետաձգվում է:

6. Է. Ղ.

Զորակոչիկ Է. Ղ.-ն ունի մի շարք առողջական խնդիրներ, որոնցից ոչ բոլորի կապակցությամբ է ուղեգրվել բժշկական հետազոտությունների: Արդյունքում նա ճանաչվել

է պիտանի զինվորական ծառայության համար։ Կազմակերպությունը դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ մինչև զինվորական ծառայությանը պիտանիության մասին որոշում կայացնելը զորակոչիկին համալիր հետազոտությունների ուղեգրելու հարցով։

Արդյունքում ԿԲՀ որոշմամբ զորակոչիկին տրամադրվել է տարկետում մեկ տարի ժամկետով։

7. Մ. Ս.

Զորակոչիկ Մ. Ս.-ն ունի մի շարք առողջական խնդիրներ, այդ թվում՝ վերջույթների անոթների արյան շրջանառության, ոտնաթաթի ձևափոխման, ինչպես նաև նյարդային խնդիրներ։ Զորակոչիկը հետազոտվել է առողջական խնդիրների միայն մի մասի կապակցությամբ։ Զորակոչային բժշկական հանձնաժողովի բժիշկներից մեկը հայտնել է, որ եթե դրանց հիմքով Մ. Ս.-ն տարկետում չստանա, ապա նա կուղեգրվի հետազոտության նաև մյուս խնդիրների կապակցությամբ։

Բացի նշված խնդրից զորակոչիկը մի քանի անգամ դիմել է ԶԶՀԾ տարածքային ստորաբաժանում՝ ստանալու իր առողջական վիճակի հետազոտությունների վերաբերյալ ակտերի պատճենները, սակայն դրանք զորակոչիկին չեն տրամադրել։

Միայն զորակոչի ավարտից երեք օր առաջ զորակոչիկը կարողացել է ստանալ իր առողջական վիճակի հետազոտությունների վերաբերյալ ակտերի պատճենները և գործնականում ժամանակ չի ունեցել ծանոթանալ դրանց։

8. Է.Գ.

Զորակոչիկ Է.Գ-ն ունի տեսողության խնդիր։ Զորակոչիկն իր միջոցներով անցել է հետազոտություն, սակայն երկրորդ անգամ իր միջոցներով ստուգիչ հետազոտության ներկայանալով՝ տարբեր բուժհաստատություններում նրան հրաժարվել են հետազոտել,

պատճառաբանելով, որ զորակոչային տարիքի անձանց հետազոտություններն իրականացվում են միայն զորակոչային բժշկական հանձնաժողովի ուղեգրով:

Պահեստազորում հաշվառված անձ

9. Բ. Վ.

Պահեստազորում հաշվառված Բ. Վ.-ն վարժական հավաքների կանչվելիս պետք է փորձաքննվեր ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի N 404-Ն որոշման 58-րդ հոդվածի («ամորձիների բացակայություն») «ա» կետով («երկու ամորձու տեղակայում որովայնի խոռոչում կամ բացակայությունը, **միակ ամորձի**»): Որոշման Հավելված N 1-ը իմպերատիվ ձևով սահմանում է, որ I, II, IV, V, VI այունակներով փորձաքննվող անձինք ճանաչվում են ոչ պիտանի զինվորական ծառայության համար: Մինչդեռ 58-րդ հոդվածով փորձաքննվողների վերաբերյալ նշվում է 56-րդ հոդվածի բացատրական մասում, որտեղ սահմանվում է, որ «չորրորդ և հինգերորդ այունակների համար կիրառվում է 58 հոդվածի «գ» կետը», այսինքն՝ անձինք պիտանի են զինվորական ծառայության համար: Ընդգծենք, որ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման Հավելված 1-ով իմպերատիվ կերպով սահմանվում է, որ միակ ամորձու դեպքում անձինք, այդ թվում նաև չորրորդ և հինգերորդ այունակներով փորձաքննվողները պետք է փորձաքննվեն միայն 58-րդ հոդվածի «ա» կետով և ոչ թե «գ» կետով: